ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF TSAKHKADZOR

2310 ք. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 10 Tsakhkadzor city Orbeli Br.10
Հեռ.Tel.: (+374 223) 6-04-02, 6-04-03

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի շրջանակներում
գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ծաղկաձորի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագծի N1 հավելվածում նշված աշխատանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեով, մինչև 2015թ. մարտի 30-ը, ժամը 10 $^{00}$-ը:

Հայտերը կբացվեն ՀՀ Կոտայքի մարզ, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում, 2015թ. մարտի 30-ին, ժամը 10 $^{00}$-ին:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցության մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մեր էլեկտրոնային հասցեն՝ meria@tsakhkadzor.am :

Հեռ.022360402

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող Տ.Պետրոսյան

**Հավելված 1**

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ

## ԴԻՄՈՒՄ

------------------------------------------------------------------------------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

----------------------------------------------------------------------------------------ի կողմից N<<ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3>> ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի ------------------------------------------------------------------------------------------ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

--------------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

-------------------------------------------------------------------------------ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

------------------------------------------------------------------------------------------------------------------------ի էլեկտրոնային փոստի հասցեն

_________________________________________________ ____________

Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

**Հավելված 2**

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/1>> ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _______________________________________ առաջարկում է պայմանագիրը
Մասնակցի անվանումը
կատարել հետևյալ գնով`

(ՀՀ դրամ)

| Չափաբաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | | | | |
| 2 | | | | |
| 3 | | | | |
| | | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում*

_______________________________________________ ____________
Մասնակցի անվանումը և (ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը) (ստորագրությունը

Կ. Տ.

**ՆԱԽԱԳԻԾ**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ՝ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐՈՎ և ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԳԾԱՆՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *«ԾՔ–ՇՀԱՇՁԲ-15/3»*

ք. Ծաղկաձոր <<____>> ____________ 2015 թ.

Ծաղկաձորի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Ա.Հարությունյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և <<____________________>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն ____________________-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Կատարող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատուցել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների կահավորման՝ ճանապարհային նշաններով և ավտոմոբիլային ճանապարհների գծանշման աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանքներ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքները և վճարել դրա համար:

1.2 Կապալառուն Աշխատանքը հասցնում է Պատվիրատուին:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից մատուցվող Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2 Առանց Աշխատանքների արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից մատուցված Աշխատանքները չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին և (կամ) խախտվել է Աշխատանքների մատուցման ժամկետը և Աշխատանքները չի կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

2.1.3 Չընդունել Աշխատանքների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը.

2.1.4 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Աշխատանքների արդյունքը, իսկ Աշխատանքների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում Աշխատանքների արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատուցված Աշխատանքների արդյունքը:

2.3.2 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու փաստացի մատուցված Աշխատանքների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.3 Մինչև Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով:

2.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կապալառուն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կապալառուը Աշխատանքների (Աշխատանքների առանձին փուլի) մատուցմանը ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 2):

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Կապալառուի մատուցած Աշխատանքների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կապալառուի մատուցած Աշխատանքների գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է ---------------- դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Աշխատանքների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա ՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքների դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, բայց ոչ ուշ քան մինչև 30.12.2015թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքների մատուցման որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման, ինչպես նաև 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունվելու, Աշխատանքները չմատուցելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ համապատասխան Պայմանագրի գնի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ Պայմանագրի գնի 0,05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքներ մատուցելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ ուշացված յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարման ավարտը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբաղջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռքբերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնման առարկայի ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Աշխատանքների կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

Սույն պայմանագրի ապահովման չափը կազմում պայմանագրի գնի տաս տոկոսը: Ընդ որում, սույն պայմանագրով նախատեսվում է, որ պայմանագրի կատարման ապահովում ներկայացրած անձը՝ Կապալառուն, պարտավոր է ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել սույն պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած 4 էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Ծաղկաձորի քաղաքապետարան | <<______________________>> ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբ.,9 | Հասցե ________________________ |
| ՀՎՀՀ՝ 03001885 | ՀՎՀՀ ________________________ |
| Հ/Հ 900122002240 | ՀՀ ___________________________ |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ ________________________ |
| Քաղաքապետ՝ Ա.Հարությունյան | ____________________ |
| Կ.Տ | Կ.Տ |

**ՀԱՎԵԼՎԱԾ N 1**

_______________ 2015թ. N ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3
ծածկագրով պայմանագրի

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

| Չափաբաժնի համարը | Աշխատանքի անվանումը | Հիմնական տեխնիկական ցուցանիշները | Չ/մ | Քանակ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների կահավորման աշխատանքներ՝ ճանապարհային նշաններով | Ավտոմոբիլային ճանապարհների կահավորման աշխատանքներ՝ ճանապարհային նշաններով - ուղղության ցուցիչներ՝ երթևեկելու ուղղություններ դեպի նշանի վրա նշված բնակավայրերը և այլ օբյեկտներ- 8հատ, որոնք պետք է ճանապարհային երթևեկության մասնակիցներին տրամադրեն տեղեկություն համապատասխան օբյեկտի գտնվելու վայրի մասին:<br>2հատ- Նշանները պետք է լինեն կապույտ ֆոնով և սև եզրագծով ուղղանկյուններ, որոնց վրա պատկերված լինեն սպիտակ տառերով անվանումներ:<br>6 հատ- Նշանները պետք է լինեն սպիտակ ֆոնով և սև եզրագծով ուղղանկյուններ, որոնց վրա պատկերված լինեն սև տառերով անվանումներ:<br>Անվանման տակ՝ սպիտակ կամ կապույտ գոտում, սև նշումներով կարող են նշված լինել մինչև տվյալ օբյեկտ եղած հեռավորությունները և ուղղության սլաքը:Անհրաժեշտ է նշաններն ամրացված լինեն համապատասխան երկաթյա ձողի վրա:<br>Ճանապարհային նշանների չափերը պետք է համապատասխան են ԳՕՍՏ 10807-78 «Ճանապարհային նշաններ. «Ընդհանուր տեխնիկական պայմաններ» ստանդարտին: | հատ<br>հատ | 2<br>6 |
| 2. | Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների գծանշման աշխատանքներ | 1. Երթևեկելի մասի նշագծում հոծ գծով<br>2 .Երթևեկելի մասի նշագծում ընդհատված գծով 1:3<br>3. Ձևավոր նշագծում վրձնով երկշերտ | կմ<br>կմ<br>100մ$^2$ | 6.5<br>3.7<br>5.500 |

Ճանապարհային նշանների մատակարարումը և տեղադրումը կատարում է Կապալառուն:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Ծաղկաձորի քաղաքապետարան | <<______________________>> ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբ.,9 | Հասցե _______________________ |
| ՀՎՀՀ՝ 03001885 | ՀՎՀՀ _______________________ |
| Հ/Հ 900122002240 | ՀՀ _______________________ |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ _______________________ |
| Քաղաքապետ՝ Ա.Հարությունյան | ____________________ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 2
___________________2015թ. N ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3
ծածկագրով պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Չ/հ | Աշխատանքի | | | Նախատեսվում է գնել 2015 թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | | | | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը | քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների կահավորման աշխատանքներ՝ ճանապարհային նշաններով | հատ | | | | 8 | | | | | | 8 | |
| 2 | Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների գծանշման աշխատանքներ | կմ | | | | 10.2 | | | | | | 10.2 | |
| | | 100մ$^2$ | | | | 5.500 | | | | | | 5.500 | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ծաղկաձորի քաղաքապետարան

Հասցե՝ ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբ.,9

ՀՎՀՀ՝ 03001885

Հ/Հ 900122002240

Կենտրոնական գանձապետարան

Քաղաքապետ՝ Ա.Հարությունյան

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<______________________>> ՍՊԸ

Հասցե _________________________

ՀՎՀՀ _________________________

ՀՀ ____________________________

Բանկ _________________________

____________________

Կ.Տ

Հավելված 3
_______________2015թ. N ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2015 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների կահավորման աշխատանքներ՝ ճանապարհային նշաններով | ... % | ... % | ... % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |
| 2. | Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ավտոմոբիլային ճանապարհների գծանշման աշխատանքներ | ... % | ... % | ... % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % | 100 % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Ծաղկաձորի քաղաքապետարան | <<____________________>> ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Ծաղկաձոր,Օրբելի եղբ.,9 | Հասցե ______________________ |
| ՀՎՀՀ՝ 03001885 | ՀՎՀՀ ______________________ |
| Հ/Հ 900122002240 | ՀՀ ______________________ |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ ______________________ |
| Քաղաքապետ՝ Ա.Հարությունյան | __________________ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված 4

«------ ---------------------- 2015թ. N ԾՔ-ՇՀԱՇՁԲ-15/3

ծածկագրով պայմանագրի

Կապալառու

______________________________

______________________________

______________________________

գտնվելու վայրը____________________________

Պատվիրատու

______________________________

______________________________

______________________________

գտնվելու վայրը____________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

---- ---------------------- 20------թ.

Պայմանագրի անվանումը՝ ------------------------------------------------------------------------------:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ----- ---------------------- 20------թ

Պայմանագրի համարը՝ ----------------------------

Պատվիրատուն, ի դեմս ------------------------------------------------------------------------------------------------------------------, և Կապալառուն, ի դեմս ----------------------------------------------------------, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կապալառուն ------ ---------------------- 20------թ.-ից ------ ---------------------- 20------թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքը

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________________

(ստորագրություն)

______________________________

Աշխատանքն ընդունեց

______________________________

(ստորագրություն)

______________________________